# ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. Արվեստի ծագումը: Նախնադարյան հասարակության արվեստի առանձնահատկությունները:
2. Քարանձավային պատկերներ (Եվրոպա, Աֆրիկա):
3. Նախնադարյան քանդակի հուշարձանները և նրանց տարբերակիչ հատկանիշները: Ժայռապատկերներ:
4. Եգիպտոս: Վաղ և հին թագավորությունների արվեստը (մաստաբաներ, բուրգեր, սֆինքսներ):
5. Հին և Միջին թագավորությունների արվեստը և հիքսոսների ներխուժումը:
6. Նոր թագավորություն–տաճարների կառուցումը (Հաթշեպսուտի տաճար, Կառնակ, Լուքսոր):
7. Ամառնայի արվեստը (Էխնաթոն, Նեֆերտիտի):
8. Եգիպտական որմնանկարչությունը, տեխնիկան, թեմաները և նկարելակերպը: Ֆայումյան դիմանկարներ:
9. Շումերներ: Ճարտարապետությունը և արվեստը:
10. Խեթեր և խուռռիներ: Թիլ հիլաններ, ժայռաքանդակներ, օրթոստատներ:
11. Ասորեստանի տաճարներն ու պալատները Նինվեում և Խորսաբադում: Իշտարի տաճարը Բաբելոնում: Իրան: Պերսեպոլիս:
12. Էգեյան աշխարհի արվեստը: Կրետեի և Միկենեի համակառույցները, քանդակներն ու որմնանկարները:
13. Արխաիկ արվեստ: Կորաներ և կուրոսներ:
14. Հին հունական ճարտարապետական օրդերները:
15. Ակրոպոլիսը և տարբեր օրդերների օգտագործումը:
16. Վաղ և բարձր կլասիկայի հունական քանդակը (5–րդ դ. մ.թ.ա. Միրոն, Պոլիկլետ, Ֆիդիաս):
17. Պոլիսային մշակույթի ճգնաժամը և մարդու ֆիգուրի նոր մեկնաբանումներ (Սկոպաս, Պրակսիտել, Լիսիպպոս):
18. Հունական վազանկարչությունը և նկարչությունը ըստ գրական աղբյուրների:
19. Հելլենիստական արվեստ և նրա աշխարհագրական ընդգրկումը:
20. Էտրուսկյան արվեստ:
21. Հին Հռոմի գլխավոր ճարտարապետական հուշարձանները:
22. Հռոմեական դիմաքանդակը:
23. Պոմպեյի, Հերկուլանումի և Հռոմի որմնանկարչությունը:
24. Ուշ հռոմեական կայսրության գեղարվեստական մշակույթը և վաղ քրիստոնեական

արվեստի ակունքները:

25. Միջնադարյան քրիստոնեական արվեստի ակունքները, աշխարհայացքային հիմքերը և էսթետիկան:
26. Բյուզանդական արվեստի պարբերացումը և էսթետիկան:
27. Պրովինցիաների և կենտրոնի արվեստի հարաբերակցությունը (սիրիական, կապադովկիական, ղպտիական արվեստ և Կ.Պոլսի, Հռոմի և Ռավեննայի արվեստը):
28. Խճանկարչությունը, որմնանկարչությունը, գրքարվեստը Բյուզանդիայում և քրիստոնեական պատկերագրության կազմավորումը:
29. Սրբապատկերներ և իկոնոստաս (Բյուզանդիա և Ռուսաստան):
30. Արևմտյան Եվրոպայի միջնադարյան արվեստի ակունքները: Կարոլինգյան արվեստ:
31. Ռոմանական արվեստը (11–12–րդ դդ): Վանքային համալիրներ: Քանդակը և որմնանկարչությունը:
32. Գոթիկան՝ միջնադարյան եվրոպական արվեստի և ճարտարապետության զարգացման բարձրակետ (13–15–րդ դդ):
33. Գոթական քանդակը և վիտրաժը, նրանց նշանակությունը տաճարների ձևավորման մեջ:
34. Վերածննդի արվեստում անտիկ և գոթական ժառանգությունը:
35. Իտալական և Հյուսիսային Վերածննդի պարբերացումը:
36. Նախավերածնունդի (Պրոտոռենեսանս) քանդակը:
37. Ջոտտոն Վերածննդի արվեստի ռահվիրա:
38. 14–րդ դ. Սիենայի դպրոցի ներդրումը (Սիմոնե Մարտինի, Լորենցետտի եղբայրներ):
39. Լեոն Բատիստա Ալբերտին որպես ճարտարապետ և արվեստի տեսաբան:
40. Դոնատելլոն, Գիբերտին, Վերոքիոն որպես վաղ Վերածննդի մեծ քանդակագործներ:
41. Ֆլորենցիայի գեղանկարչական դպրոցը–Մազաչչո, Պաոլո Ուչելլո, Անդրեա դել Կաստանիո, Դոմինիկո Վենեցիանո:
42. Պիեռո դելլա ֆրանչեսկան և մոնումենտալ գեղանկարչությունը:
43. Վենետիկի դպրոցը՝ կապող օղակ բյուզանդական և նիդեռլանդական արվեստների (Անտոնելլո դե Մեսսինա, Բելլինիներ): Սանդրո Բոտիչելլի:
44. Բարձր Վերածնունդը: Միքելանջելո և Լեոնարդո դա Վինչի: Մարդու ներաշխարհի և գեղարվեստական նոր իդեալի մեկնաբանում:
45. Ռաֆայել:
46. Վենետիկյան 16–րդ դ. գեղանկարչությունը–Ջորջոնե, Տիցիան, Վերոնեզե և Տինտորետտո:
47. Հյուսիսային Վերածննդի արվեստը 15–16–րդ դդ.: Հաստոցային գեղանկարչության գերակայությունը Նիդեռլանդներում:

48. Յան վան Էյկը և նոր տեսողությունը Նիդեռլանդներում:
49. Ռոգիր վան դեր Վեյդենի, Մեմլինգի, Հիերոնիմոս Բոսխի և Պիտեր Բրեյգելի արվեստը: Դիմանկարը:
50. Պառակտված Գերմանիայի արվեստը 15–16–րդ դդ.: Հումանիզմը և Ռեֆորմացիան:
51. Ալբրեխտ Դյուրերի բազմակողմանի գործունեությունը:
52. Գրյունեվալդ: Գոթական ավանդները 16–րդ դարի արվեստում–Լուկաս Կրանախ, Հանս Հոլբայն Կրտսեր:
53. Արևմտյան Եվրոպայի 17–րդ դ. արվեստի բնորոշումը: Ռեալիզմի և սուբյեկտիվիզմի յուրահատկությունը այս արվեստում, բարոկկոյի և կլասիցիզմի դրսևորումները:
54. Բեռնինին և նրա նորարարական որոնումները:
55. Կարավաջոյի և կարավաջիզմի դերը 17–րդ դ. արևմտա–եվրոպական արվեստում:
56. Պիտեր Պաուլ Ռուբենսը և բարոկկոյի խնդիրը ֆլամանդական արվեստում:
57. Էլ Գրեկոյի արվեստը: Գեղանկարչության վերելքը Իսպանիայում: (Սուրբարան, Ռիբերա, Վելասքեզ):
58. Մեծ հոլանդացիներ՝ Ռեմբրանդտ, Ֆրանց Հալս:
59. Փոքր հոլանդացիները և ժանրային արվեստը: Յան Վերմեեր դի Դելֆտը և գեղանկարչական նվաճումները Հոլանդիայում:
60. Բնանկարը (Յակոբ վան Ռայսդայել, Մեյնդերտ Հոբբեմա, Ռեմբրանդտ):
61. Ռեմբրանդտի հումանիզմը և մարդկային անհատի նրա կոնցեպցիան: Օֆորտները:
62. Կլասիցիզմը Ֆրանսիայում (Պուսեն, Լորեն):
63. Ակադեմիան և Լուսավորության շրջանի արվեստը Ֆրանսիայում: Սալոններ:
64. Անտուան Վատտոյի և գալանտ ոճի արվեստը:
65. Ռեալիզմը և ռացիոնալիզմը Շարդենի արվեստում:
66. Դիդրոն և գեղարվեստական քննադատությունը: Տիեպոլո և քաղաքային բնանկարը Իտալիայում (Կանալետտո, Գվարդի):
67. Ֆրանսիական նեոկլասիցիզմի առանձնահատկությունները (Ժակ Լուի Դավիդ, Դոմինիկ Էնգր):
68. Ապահերոսականացումը Գոյայի գործերում, գեղանկարչության մեջ և գրաֆիկայում:
69. Բնանկարը Անգլիայում (Ջ.Կոնստեբլ, Ու.Թերներ):
70. Ռոմանտիզմի էսթետիկան Ֆրանսիայում (Ժերիկո, Դելակրուա):
71. Ռեալիզմը Ֆրանսիայում 19–րդ դ. կեսերին և նրա տարբեր արտահայտությունները Միլլերի, Կուրբեի և Դոմիեի արվեստում:
72. Բարբիզոնյան բնանկարչական դպրոցը (Կորո, Դոբինյի, Ռուսսո, Տրոյոն):
73. Փարիզի կոմունան և իմպրեսիոնիզմի ձևավորումը:
74. Իմպրեսիոնիզմ: Նոր օդա-լուսային տեսողության հաստատումը արվեստում:

75. Մանե, Մոնե, Պիսսարո, Ռենուար, Դեգա:
76. Պոստիմպրեսիոնիզմ: Արվեստի զարգացման նոր ուղիների որոնում:
77. Պուանտելիզմի մեթոդը (Սյորա, Սինյակ):
78. Սեզան, Գոգեն, Վան Գոգ:
79. «Մոդեռն» ոճը և սիմվոլիզմը:
80. Ֆրանսիական քանդակագործության զարգացումը՝ Բարրի, Ռոդեն:
81. Դարասկզբի ֆրանսիական արվեստը:
82. Ռոդենի հետևորդները քանդակագործության մեջ–Մայոլ, Բուրդել, Դեսպիո:
83. «Ֆովիստների» խումբը:
84. Ձևի և գույնի պարզությունը (Մատիս, Դյուֆի, Վլամինկ, Դերեն):
85. Մատիս:
86. Կուբիզմը, նրա ծագումը, գեղագիտական սկզբունքները: Պիկասսո, Բրաք, Գրի, Մետցենժե, Լեժե, Օրֆիզմ, Դելոնե:
87. Պիկասսոյի որոնումները և ներդրումը 20–րդ դ. տարբեր ուղղություններում:
88. Սյուրռեալիզմի մանիֆեստները և գլխավոր ներկայացուցիչները:
89. Էքսպրեսիոնիզմը Գերմանիայում: Դրեզդենի «Կամուրջ» և Մյունխենի «Կապույտ հեծյալ» խմբերը:
90. Դրեզդենի խմբի հետաքրքրությունը միստիկայով, միջնադարով, սոցիալական կյանքի բարոյա–զգայական լարվածությամբ:
91. Մյունխենի խմբի գլխավոր ներկայացուցիչները՝ Կանդինսկի, Քլեե, Մարկ և այլն:
92. Աբստրակտ արվեստ և նրա տիպերը:
93. Ֆուտուրիզմը Իտալիայում–Մարինետտիի մանիֆեստը, Բոչչիոնի, Կարրա: Դե Կիրիկոյի «մետաֆիզիկական» նկարչությունը:
94. Հեղափոխական արվեստը Մեքսիկայում:
95. Աբստրակտ էքսպրեսիոնիզմը ԱՄՆ–ում և Ա.Գորկին որպես նրա ռահվիրա:

## ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

96. Հին Ռուսիայի արվեստը և նրա ակունքները (Բյուզանդիա, արևմտյան սլավոններ և այլն): Հիմնական գեղարվեստական դպրոցները և նրանց առանձնահատկությունները:
97. Կիևի սբ.Սոֆիայի տաճարը և նրա խճանկարները: Որմնանկարչություն: Ֆեոֆան Գրեկը և ռուս վարպետների համագործակցությունը:
98. Վլադիմիրի, Նովգորոդի և Մոսկվայի որմնանկարչությունը: Ա.Ռուբլյով, Դիոնիսի:
99. 18–րդ դ. ռուսական արվեստը: Դիմանկարը (Ֆ.Ռոկոտով, Դ.Լևիցկի, Վ.Բորովիկովսկի): Կլասիցիզմը ռուսական քանդակում (Է.Ֆալկոնե, Մ.Կոզլովսկի, Ս.Մարտոս):
100. Ռուս արվեստը 19–րդ դ. առաջին կեսում: Ռոմանտիկ դիմանկարի ժանրը (Կիպրենսկի,

Տրոպինինի, Բրյուլլով):

101. Կենցաղային ժանրի կազմավորումը (Պ.Ֆեդոտով):
102. Կլասիցիզմի և ռոմանտիզմի փոխազդեցությունը Կ.Բրյուլլովի ու Ա.Իվանովի գործերում:
103. Ա.Իվանովը որպես ռուս արվեստի ինքնության ռահվիրա:
104. Ռուս արվեստը 19–րդ դ. երկրորդ կեսում: Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի գեղագիտությունը: Պ.Մ.Տրետյակովի կողմից Տրետյակովյան պատկերասրահի հիմնումը:
105. Դեմոկրատական արվեստի ծաղկումը 1870–90–ական թթ.: Շրջիկ գեղարվեստական ցուցահանդեսների ընկերության գործունեությունը:
106. Ի.Ռեպինը և ռուսական ռեալիզմը:
107. Վ.Սուրիկովը՝ մեծագույն պատմական գեղանկարիչ: Պլեների և բնանկարի խնդիրները: Վ.Պոլենով, Ա.Սավրասով, Ի.Շիշկին և ռեալիստական բնանկարը:
108. Ի.Լևիտանը և նրա նշանակությունը ռուսական քնարական բնանկարում:
109. 19–րդ դ. վերջի և 20–րդ դ. սկզբի ռուսական արվեստը: «Միր իսկուստվա», «Բուբնովի վալետ» և այլն:
110. Վ.Սերովը որպես մեծ դիմանկարիչ և մանկավարժ: Բանաստեղծական սիմվոլի ներթափանցումը գեղանկարչության մեջ:
111. Մ.Վրուբելի ստեղծագործությունը: Սիմվոլիզմ:
112. 1907–17թթ. ռուս արվեստի զարգացման առանձնահատկությունները: Գլխավոր խմբավորումները («Գոլուբայա ռոզա», «Բուբնովի վալետ») և նկարիչները՝ Պ.Կոնչալովսկի, Ա.Կուպրին, Ի.Մաշկով, Մ.Սարյան, Պ.Կուզնեցով և այլք:
113. Ռուսական ավանգարդը և նրա նշանակությունը համաշխարհային արվեստում: Մ.Շագալ: Աբստրակտ արվեստ. Վ.Կանդինսկի, Կ.Մալևիչ:
114. Սովետական կերպարվեստը: Մարքսիզմի դասականների երկերի նշանակությունը սոցիալիստական ռեալիզմի արվեստի միտումների համար:
115. Լենինյան պրոպագանդա և ագիտացիոն–մասսայական արվեստը: 1920–30–ական թթ. գեղանկարչությունը և քանդակը:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

116. Կերպարվեստի սկզբնավորումը Հայկական լեռնաշխարհում: Նոր քարե դարի ժայռապատկերները և նրանց բովանդակած կենդանական, ծիսական, աշխատանքային մոտիվները (մ.թ.ա. 3–րդ 2–րդ հազարամյակ):
117. Բրոնզեդարյա խեցեղենը, անոթների ձևերը և պատկերված մոտիվները:
118. Բրոնզեդարյա քանդակագործությունը՝ նյութերը և մոտիվները: Վիշապներ, քարե կուռքեր:

119. Ուրարտական շրջանի արվեստը: Գլխավոր հուշարձանները: Մոնումենտալ նկարչությունը: Քանդակագործությունը և դրվագման արվեստը: Մանր պլաստիկան և կիրառական արվեստը:
120. Աքեմենյան և հելլենիստական շրջանների գեղարվեստական նմուշները: Նոր կենդանի ոճը նորագյուտ պտյակներում (ռիտոններում) և կիրառական արվեստի այլ նմուշներում:
121. Գառնիի տաճարը և նրա գեղարվեստական հարդարանքը: Քանդակագործությունը և կիրառական արվեստը: Գառնիի բաղնիքի խճանկարը:
122. Միջնադարյան կերպարվեստ: Վրթանես Քերթողի «Յաղագս պատկերամարտից» գրվածքը: 7–րդ դ. եկեղեցական որմնանկարչությունը և հիմնական թեմաները:
123. Որմնանկարչությունը 10–13–րդ դդ.: Տաթև, Ախթամար, Անի, Քոբայր, Ախթալա, Հաղպատ: Թեմատիկ և ոճական յուրահատկությունները:
124. Գրքարվեստ և մանրանկարչություն: 7–10–րդ դդ. մանրանկարչությունը: Գլխավոր հուշարձանները և պատկերաշարքերը:
125. «Խորանների մեկնությունները» և բուսական, կենդանական, ճարտարապետական մոտիվները սիմվոլիկ խորանապատկերներում:
126. 11–րդ դ. մանրանկարչությունը: Գծային ոճ: Մոնումենտալ մանրանկարչություն (Մողնու Ավետարան): Բյուզանդամետ մանրանկարչություն:
127. Անի: Հաղպատի և Թարգմանչաց Ավետարանները:
128. Կիլիկյան մանրանկարչության դպրոցները: Թորոս Ռոսլին:
129. Արքունական դպրոց: Սարգիս Պիծակ:
130. Գլաձորի մանրանկարչական դպրոցը (13–14–րդ դդ.):
131. Վասպուրականի մանրանկարչությունը (14–15–րդ դդ.) Ղրիմի մանրանկարչությունը: Հակոբ Ջուղայեցի:
132. 4–7–րդ դդ. հայկական քանդակը–ստելաներ, կոթողներ: Հիմնական թեմաները: Ճարտարապետական կոթողների քանդակազարդումը: Զվարթնոց:
133. Ախթամար: Որմնաքանդակներ և որմնանկարներ:
134. Խաչքարերի ֆունկցիոնալ իմաստները, մոտիվները և պատկերագրությունը:
135. Մոմիկը որպես ճարտարապետ, մանրանկարիչ և խաչքարի վարպետ:
136. 10-14-րդ դդ. հայկական ճարտարապետական դեկորը:
137. 17–18–րդ դդ. հայկական կերպարվեստը: Նոր Ջուղայի հայկական եկեղեցիների որմնանկարները: Հովնաթանյանների գերդաստանը (Նաղաշ, Հակոբ, Հարություն, Հովնաթան):
138. Հակոբ Հովնաթանյանը և պայմանական–ռեալիստական դիմանկարի ծաղկումը Ստեփանոս Ներսիսյանի դիմանկարները և ժանրային առաջին նկարը:

139. Հովհ. Այվազովսկի. հայկական և բիբլիական թեմաները նրա ստեղծագործության մեջ: Այվազովսկու ազդեցությունը հայ ծովանկարիչների վրա (Մախոխյան, Մահտեսյան, Շաքանյան, Աղամյան):
140. Գևորգ Բաշինջաղյանը հայկական բնանկարի հիմնադիր:
141. Վարդգես Սուրենյանցը և պատմական ժանրը, նրա տեխնիկան և կապը գեղարվեստական նոր մեթոդների հետ («մոդեռն», «իմպրեսիոնիզմ»):
142. Եղիշե Թադևոսյան: Իմպրեսիոնիզմը և սիմվոլիզմը նրա ստեղծագործություններում:
143. Ռեալիզմը հայ գեղանկարչության մեջ դիմանկարի և բնանկարի ժանրերում: Փ.Թերլեմեզյան, Ստ.Աղաջանյան:
144. Մ.Սարյանի վաղ, սիմվոլիստական շրջանի ստեղծագործությունը: Նրա գործունեությունը Մոսկվայում և արևելյան նկարների շարքը:
145. Սեդրակ Առաքելյանը որպես գեղանկարիչ:
146. Գ.Յակուլովը և նրա բեմանկարչությունը: Նրա դերը ավանգարդում:
147. Հ.Կոջոյան: Նրա պարսկական նկարները: Գրաֆիկան: «Կոմունիստների գնդակահարությունը Տաթևում»:
148. Երվանդ Քոչար: Տարածությունը գեղանկարչության մեջ: Քոչարը որպես քանդակագործ և փիլիսոփա նկարիչ:
149. Խորհրդահայ գեղանկարչությունն ու քանդակը–զարգացման հիմնական փուլերն ու ներկայացուցիչները (Սարյան, Կոջոյան, Ա.Սարգսյան, Ս.Ստեփանյան, Էդ.Իսաբեկյան):
150. Թիֆլիսի դպրոցը (Ա.Բաժբեուկ-Մելիքյան, Ջոտտո, Կարալով):
151. Սարյանը և սարյանական դպրոցը (Զ.Զարդարյան, Մ.Աբեղյան, Հ.Կալենց):
152. 1960-70-ական թթ. հայ գեղանկարչությունը և քանդակը:
153. Սփյուռքի արվեստը. Է.Շահին, Լ.Թութունջյան, Արշիլ Գորկի, Ժանսեմ, Գառզու, Խ.Տեր-Հարություն: